առնն, նոյնպէս բարձրադիտակ, այլ կանացի և վայելչական գեղով, ծիրանեաց և շղարշներու մէջ, իբրև յաւերժ հարսնուհի, քմծիծաղով հաճիլ կը ձեւացընէ. այլ 'ի սրտէ անչուշտ կը զրուցէ՝ թէ «Այդ փառք՝ նոր չեն ինձ համար. զի քոյր եմ «մեծին և քաջին 'ի թագաւորս՝ Տիգրանայ Ար-«շակունւոյ»։ — Մինչդեռ այս կարճ միջոցին, որ հազիւ քառորդ մի ժամու տեւեց. Միհրդատ անունը իբրև ելեկտրական կայծ մի կը մղէր կը տանէր միտքս՝ հնադարեան պատմութեանց մէջ, փոքրիկ շոգենաւը մեծին մերձենալով, որոյ հազիւ կայմը կ'երևնար, վարէն 'ի վեր կը սուլէր 'ի Կերչ նաւորդաց՝ թէ ժամանակ է մեկնելու. հապճեպով պարկիկս առած՝ իջայ փոքր նաւուն վրայ, որ շուտով հասուց զմեզ 'ի Կերչ։

Սա երկուց ծովուց մէջ, նոյն և երկուց աշխարհաց (Կովկասու և Ռուսաստանի) վաճառաշահ և Ղրիմու բազմամարդ քաղաքաց մին է. իւր բնակիչքն 22,000 Սևաստապոլեան պատերազմէն վերջը՝ տէրութիւնն մասնաւոր խնամք դարձուցել էր այս քաղաքիս վրայ, իբրև պատերազմական նշանաւոր կէտ մի. բերդը Ռուսաստան աշխարհի առաջնակարգ ամրութեանց մէկն է, որ զնեղուցը կը պաշտպանէ. յետին արևելեան պատերազմին միջոց, երբ թուրք մարտիկ նաւերն ռմբակոծեցին անպատասպար ծովափնեայ քաղաքները Եւպատորիա և Թէոդոսիա, չհամարձակեցան Կերչի մօտենալ։

Հայկազունք սակաւաթիւ են քաղաքիս մէջ, այլ սոնին փոքրիկ վայելչաձև եկեղեցի՝ հանդերձ փոքրիկ ուսումնարանով։

Նոյն օրը՝ կիրակի երեկոյին՝ փոքր շոգենաւով մեկնեցայ 'ի Կերչէ դէպ 'ի Պերտեանք, ուր հարկ